քացիք և մահտեսիք և միաբանք սուրբ ուխտին, և մտաք ի վանս Սրբոյն Յակոբայ ի Ջեվանեցաք՝ երկրպագելով սուրբ տեղեացն և դամբարանի եղբօր սրբոյ աւետարանչի Յովանէսի։ Եւ առաւօտուն (29 Օգոստ.) գնացեալ ամենայն ուխտաւորօք[1]) ուխտել զգրունս սրբատեղացն և Սուրբ Յարութեան. և ի դուռն Յարութեան պատուհանէն մտեալ ևեթ իմ ի ներս՝ շնորհօքն Աստուծոյ արժանացեալ երկրպագելոյ կենսատու և աստուածընկալ և լուսածաւալ Սուրբ Գերեզմանին Քրիստոսի։ Եւ ապա յամենայն աւուր չրջէաք ի սուրբ տնաւրէնութեան տեղիսն մարդացեալ Աստուծոյն մերոյ։

Եւ յաւուր տօնի Վերացման սուրբ Խաչին (16 Սեպտ.) ամենայն ուխտաւորօք ի Սուրբ Յարութիւն մտաք զգիշերն և յետ սրբոյ պատարագին ելաք ի դուրս։ Նոյնպէս և մտաք Հոկտեմբերի ԻԸ ի Սուրբ Յարութիւն և զպատարագն ի խորան Սուրբ Լուսաւորչին արարաք, որ կայ ի վերոյ սրբոյ տեղի Խաչ գիւտին։

Եւ յետ աւուրց ի Հայր Սաբայ գնացաք՝ տեղիք ճգնաւորացն, որ յայրս և ի ծերպս վիմաց լերինն աղօթէին։ Անդ կացեալ զգիշեր մի ի վանս Սրբոյն Սաբայի՝ ուխտ արարեալ և ապայ զգերեզման նորին և զխուցսն արգելական անապատ տեղեացն. և երեք աւուրքք ապա ելեալ եկաք ի տեղի մեր։

Նոյեմբերի Ժ Շաբաթի աւուր՝ տօն Սրբոց Հրեշտակապետաց՝ ի Սուրբ Գէորգ գնացաք, և անտի առաւօտուն ելեալ ի Սուրբ Ծնունդ գնացեալ յերկրպագութիւն և անտի դարձեալ ի տեղի մեր։

---

1) ուխտաւորօք.